

առած՝ Պոլիս մտաւ 13 Մայիս 1657: 1658  
 Օգոստ. 10ին թուևաւորեցին աշխարհական  
 Տեղակալք եւ մարմինը ծով նետեցին, որ եւ  
 Ոսկեղջեր բերանը երեք օր ծփաց ծովու վրայ):  
 “Եւ այսքանեաց վերոյգրեցելոց լինէր վրէժինդիր  
 հոգեւոր տէրդ մեր, (կ'ակնարկէ Եղիազարը): “Եւ  
 մինչ ի սուրբ Երուսաղէմ առաջնորդ վերամբար-  
 ձաւ (այն է 1664ին), սկսան սեւագլուխք անար-  
 ժանք պատրիարք անուամբ նստիլ եւ աշխարհա-  
 կան ղուղուլից համախոհութեամբ չարքն չարեօք  
 կործանեցան. թէպէտեւ ոչ ոք եղեւ վրէժինդիր  
 ըստ իրաւանցն Աստուծոյ: Ոմն Օրտի էքմէքճի,  
 (կր շարունակուի շ. Ա. 272բ, տող 17) “Եւ  
 անդ ի կողմանէ մի յափշտակեն: Եւ գնացող  
 շունք լքտիք տեսեալ զշիքեար եւ զեաղմա հա-  
 սեալ անդ՝ ի կողմանէ մի նոքա խնն եւ թա-  
 լաննն. սնապարծն իբրու տիրապետ եմ տանս  
 կինն կուրացեալ. եկեալ աստ դրամ պահանջէ,  
 թէ երթամ զտունս ձեր պահեմ:” (Յակոբ  
 Կթղսն. Էջմ. կ'ակնարկէ: ) “Մեք կոյր, մեք  
 խուլ, մեք համր, մինչեւ ցայսօր անարժան եւ  
 նա լայեղ առ ի տեսանել եւ ի լսել եւ ի խօ-  
 սել. մեք մուֆլիս, նոքա խօճէքի. մեք ռամիկ եւ  
 ռամկածին եւ պարտատէր. նոքա բառացի հա-  
 բուստ եւ ազնրւորդի եւ շահարար շինարար:  
 Թողցուք զաշխատանս մեր վասն վերոյգրելոցդ,  
 եւ առ այն տացուք զգատաստան որ վրէժխըն-  
 դիրն է ամենայնի յաւուր վրիժուց հատուցման  
 հատուցանել իւրաքանչիւրոց ըստ գործոց իւ-  
 բեանց: Եկեսցուք ի խնդիր մեր, զոր ի գլուխ